ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի գեղարվեստի պետական

ակադեմիայի ռեկտորի ժամանակավոր

պաշտոնակատար Արիադնա Մելիքյան

«23» նոյեմբերի 2023 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Աննա Սերգեյի Օնանյանի «Սկիհի ծածկոցների պատկերագրական և զարդային առանձնահատկությունները» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է ՀԳՊԱ արվեստագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնի 2023 թ. նոյեմբերի 22-ի նիստում (Արձանագրություն թիվ 5), որին մասնակցում էին՝ ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ք. Ավետիսյանը, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ. Սիմոնյանը, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս. Հմայակյանը, արվեստագիտության թեկնածու, դոցենտներ Ն. Ղարիբյանը, Ս. Գալստյանը, Եվգ. Քալանթարյանը, Զ. Հակոբյանը, արվեստագիտության թեկնածու, ավագ դասախոս Գ. Ղողոսյանը, դոցենտ Է. Մկրտչյանը, ավագ դասախոս Հ. Մակվեցյանը, դասախոսներ Մ. Ղազարյանը, Ն. Սահակյանը, ամբիոնի լաբորանտ Լ. Խաչատրյանը:

Հայկական միջնադարյան դեկորատիվ-կիրառական արվեստի առանձին տեսակները, այդ թվում եկեղեցու ծիսական արարողությունների ժամանակ գործածվող սկիհի ծածկոցները մասնագիտական հետազոտության կարիք ունեցող ասպարեզներից է, որի ուսումնասիրությանն է նվիրված սույն ատենախոսությունը: Այս առումով արդիական է և գիտական հետաքրքրություն է ներկայացնում Աննա Սերգեյի Օնանյանի ատենախոսության թեման և հետազոտության նպատակը: Հայկական եկեղեցիներում գործածվող սկիհի ծածկոցների ուսումնասիրության շրջանակներում քննության են առնվում սկիհների

առաջացման պատմությունը, հարդարանքի առանձնահատկությունները՝ ծիսական գործածության այլ գործվածքների հետ տարբերությունները՝ ուղղափառ և կաթոլիկ եկեղեցիների ծածկոցների հետ: Խմբավորվում են ըստ ստեղծման և պահպանման վայրի՝ ամբողջացնելով մեզ հասած սկիհի ծածկոցների մասին տեղեկությունները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, համապատասխան տրոհումներ պարունակող հինգ գլխից, եզրակացությունից, օգտագործած գրականության (166 անուն), էլեկտրոնային աղբյուրների (27) ցանկերից, հավելվածում զետեղված ալբոմից (136 վերատպություն) և նկարների ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում է ուսումնասիրության արդիականությունը, բնորոշվում առարկան ու թեմայի մշակվածության աստիճանը, ներկայացվում հետազոտության նպատակն ու խնդիրները:

Առաջին գլխում հետազոտվում է ծիսական ծածկոցների ծագումն ու գործածությունը կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիներում, դրանց առաջին օրինակները և պատկերագրության ձևավորման պատմությունը: Առանձին ենթագլխում ներկայացվում են Հայ Առաքելական եկեղեցում կիրառվող ծածկոցները՝ հիմնվելով ինչպես կոնկրետ օրինակների, այնպես էլ միջնադարյան արվեստի այլ հուշարձաններում (մանրանկար, որմնանկար) պատկերված նմուշների վրա:

Երկրորդ և երրորդ գլուխների ենթաբաժիններում հետազոտվում են Արևմտյան Հայաստանում (Մուշ, Վան, Կարս և այլն) և Արևելյան Հայաստանում (Էջմիածին, Երևան, Շիրակ և այլն) և հայկական գաղթօջախներում (Կ. Պոլիս, Տրապիզոն, Նոր Ջուղա և այլն) ստեղծված ծածկոցները, որոնք Ա. Օնանյանը խմբավորում է ըստ ստեղծման և գտնվելու վայրի, նկարագրում հորինվածքը, ոճական առանձնահատկությունները:

Չորրորդ գլխում ներկայացվում են մակագրություն չունեցող, անհայտ ծագման սկիհի ծածկոցները, որոնք առանձացվում են ըստ թանգարանային հավաքածուների՝ Հայաստանի և արտերկրի թանգարաններում պահվող նմուշների:

Վերջին գլուխը նվիրված է սկիհների վրայի արձանագրությունների և ասեղնագործության նյութերի, տեսակների ուսումնասիրությանը: Ներկայացվում են արձանագրությունների տեսակներն ու բովանդակությունը, ասեղնագործության զանազան տեսակներն ու նյութերը՝ լուսաբանելով որոշ տերմիններ:

Հետազոտության ընթացքում հայցորդի կողմից կիրառված նկարագրական, վերլուծական, ոճական, պատկերագրական, աղբյուրագիտական, պատմահամեմատական, տեխնիկա-տեխնոլոգիական համալիր քննության արդյունքում ներկայացվում և հիմնավորվում են հայկական եկեղեցիներում գործածվող սկիհի ծածկոցների վերաբերյալ սեփական դիտարկումները:

Ատենախոսության գիտական արժեքն այն է, որ առաջին անգամ առանձին ուսումնասիրության նյութ են դարձել սկիհի ծածկոցները, և հետազոտության համար կատարվել է կարևոր հավաքչական աշխատանք: Դրանք խմբավորվել են ըստ ստեղծման, գտնվելու վայրի և հարդարանքի առանձնահատկության: Առաջին անգամ ամփոփվել է Հայաստանի և արտերկրի թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում պահվող և

հրատարակված աղբյուրներում եղած նմուշները: Հանգամանորեն ուսումնասիրվում են սկիհի ծածկոցների հարդարանքի տեսակները (սյուժետային տեսարաններ ունեցող, խորհրդապատկերներով, խառը տիպի), գործածության նպատակը՝ կապված Պատարագի արարողության հետ: Արժեքավոր է նաև այն, որ սկիհների վրայի արձանագրությունների ընթերցման ու վերլուծության միջոցով բացահայտվում են ինչպես տեղեկություններ գյուղերի, քաղաքների, վանքերի, այնպես էլ արդեն գոյություն չունեցող բնակավայրերի ու եկեղեցիների մասին, իսկ կարատեսակների ու գործածվող նյութերի ուսումնասիրության միջոցով առանձնացվում են տարբեր վայրերի (Վան-Վասպուրական, Ուրֆա, Այնթապ և այլն) ասեղնագործության առանձնահատկությունները:

Ուսումնասիրության նյութի մշակվածության աստիճանը, աշխատանքի շարադրանքի տրամաբանական կառուցվածքը, ծածկոցների նկարագրության ու վերլուծության մասնագիտական կարողությունները, արձանագրությունների ընթերցումն ու վերծանումը ասեղնագործության տեխնիկաների մասին գիտելիքները հավաստումն են, որ կատարվել է բարեխիղճ աշխատանք, հայցորդը տիրապետում է միջոլորտային բավարար գիտելիքների:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները և միանգամայն համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը: Հեղինակի հրատարակած գիտական հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Վերոհիշյալի հետ մեկտեղ պետք է նշել, որ աշխատանքի վերաբերյալ կան որոշակի նկատառումներ և դիտողություններ, որոնք հանգում են հետևյալին.

- Ինչպես ատենախոսության մեջ, այնպես էլ սեղմագրում «Թեմայի մշակվածության աստիճանը» բաժնում կարելի է ավելի համառոտ ներկայացնել հետազոտության նյութին վերաբերող գրականության վերլուծությունը, այն ծանրաբեռնված է գիտնականների մասին հանրահայտ տեղեկություններով (սեղմագիր, էջ 4-6, ատենախոսություն, էջ 6-11 և չգիտես ինչու տարվել է ներածության վերջ):
- Սկիհի ծածկոցների տեսակների թվարկման ու նկարագրության տեքստերի մեջ հայտնվում են մի դեպքում Պատարագի և Պատարագամատույցի մասին ընդհանուր, հանրահայտ տեղեկություններ (էջ 24-25), մի այլ տեղ՝ Մշո Սբ Կարապետ վանքի մասին (էջ 33-35) կամ Տիրամոր պատկերագրական տիպերի թվարկում (էջ 47-48), կարելի է բերել այլ օրինակներ:
- Էջ 43-ում (նկ. 16) «Աստվածածինը Մանկան, Սբ Ստեփանոսի և Սբ Հովհաննես Մկրտչի հետ» ավանդական հորինվածքով հաստոցային սրբապատկերի պատկերագրության ոչ ճիշտ մեկնաբանում և անվանումն է «Բարեխոսություն», որն այլ բովանդակություն և պատկերագրություն ունի (Գահակա Հիսուս Քրիստոսի առջև մարդկության մեղքերի թողության համար բարեխոսություն են աղերսում Սբ Մարիամ Աստվածածինն ու Սբ Հովհաննես Մկրտիչը):
- Ընդունված կարգի համաձայն ձեռագիր մատյանի մասին տեղեկությունները (ստեղծման և գտնվելու վայր, համարակալման թիվ) տրվում է ձեռագրի կողքին

փակագծում, այն դեպքում, որ ատենախոսության մեջ (էջ 29) տարվել է տողատակ՝ հղումների մեջ, որի փոխարեն պետք է նշվեր այդ մանրանկարի մասին կոնկրետ աղբյուրը՝ Измайлова Т., Армянская минятюра X I века, Москва, Искусство, 1979, с. 113-114, ил 56 :

- Խորհուրդ է տրվում թեմայի ուսումնասիրության շրջանակներում ավետարանական տեսարանների պատկերագրության մասին հավաստի տեղեկություններ վերցնելու համար հիմնվել ոչ թե ինտերնետային կայքերի, այլ հայերեն և օտարալեզու մասնագիտական գրականության վրա (օրինակ՝ Ավետարանական պատկերներ. Տերունական շարքի 12 գլխավոր պատկերները / հեղինակ-կազմողներ՝ Կ. Մաթևոսյան, Ա. Ավետիսյան, Երևան, 1993, Покровский Н., Очерки памятников христианской иконографии и искусства. Изд. 2-е, СПб., Изд.Тип. А.П. Лопухина, 1900, Покровский Н., Евангелие в памятниках иконографии / вступ. ст. Г. И.Вздорнова. Москва: Прогресс-Традиция, 2001, Кондаков Н. П., Иконография Богоматери / Текст и иллюстрации воспроизводятся по изданию: Н. П. Кондаков. Иконография Богоматери. Т. 1, СПБ: изд. Имрер. АН, 1914, 387 с., 420 ил., т. 2, СПБ: изд. Имрер. АН, 1915, 451 с., 251 ил. Репринт: Elibron Classics, 2003 և այլն):
- «Աշխատանքի գիտական նորույթը» բաժնից տեղեկանում ենք, որ հայցորդը գտել և ցուցակագրել է հարյուրից ավելի ծածկոց (սեղմագիր, էջ 6), ուստի ցանկալի կլիներ հավելվածում ներկայացվեր նաև այդ ցանկը՝ խմբավորելով տարբեր հավաքածուների ու աղբյուրների նյութերը, կազմվեր համեմատական տախտակներ, օրինակ՝ ըստ պատկերագրական թեմաների կամ ստեղծման վայրի, որի շնորհիվ ավելի տեսանելի կլինեն հետազոտության արդյունքները և հիմնավոր սեփական դիտարկումներն ու առաջարկած տեսակետները:

Այս դիտողությունները և առաջարկությունները գործնական նշանակություն ունեն և չեն նվազեցնում պաշտպանության ներկայացված թեկնածուական ատենախոսության գիտական արժեքը: Այն ավարտուն, ինքնուրույն աշխատանք է՝ նվիրված սկիհի ծածկոցների պատկերագրության և զարդային առանձնահատկությունների հետազոտությանը: Գիտական շրջանառության մեջ է դրվում հայ միջնադարյան դեկորատիվ-կիրառական արվեստի մի տեսակի՝ ասեղնագործ սկիհների հարդարանքի յուրահատկությունները, որը կարող է օգտակար լինել եկեղեցական գործվածքի այլ տեսակների ուսումնասիրողների համար:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Աննա Սերգեյի Օնանյանի «Սկիհի ծածկոցների պատկերագրական և զարդային առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունը գիտական պատշաճ մակարդակով համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսությունների համար ներկայացվող պահանջներին:

ՀԳՊԱ արվեստագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնը տալիս է դրական կարծիք Աննա Սերգեյի Օնանյանի «Սկիհի ծածկոցների պատկերագրական և զարդային առանձնահատկությունները» ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի

գիտական աստիճանի հայցման ատենախոսությանը և այն երաշխավորում է պաշտպանության ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդին:

ՀԳՊԱ արվեստագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Քնարիկ Ավետիսյան

Հաստատում եմ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Քնարիկ Ավետիսյանի ստորագրությունը:

ՀԳՊԱ գիտքարտուղար Անահիտ Օհանյան

Հաստատում եմ
Քնարիկ Ավետիսյանի և
Անահիտ Օհանյանի ստորագրությունները:
ՀԳՊԱ տեղակալ՝ Վ. Ավետիսյան
23.11.2023թ.